25ՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 6912 — 30 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1908 — ԵՐԵՔՇԱԲԹԻ — 17 ՐԱՄԱԶԱՆ — 13 Octobre 1908 — 25me année — N. 6912

"ԱՐԵՒԵԼՔ„
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԳԱՐԵԳԻՆ ՊՕՅԱՃԵԱՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԳԱԼԱԹԻԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
Կ. Պոլսոյ համար տարեկան 80 Ղրշ.
» » վեցամսեայ 45 »
Դուրսը՝ Եւրոպա համար տարեկան 108 »
» » » վեցամսեայ 60 »
Օտար երկիրներու համար տարեկան 25 Ֆր.
» » » վեցամսեայ 20 »
Թղթատարի ծախքը մեր վրայ

10 ՓԱՐԱ

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

آرمولك
ارمنیجه یومی و سیاسی غزته
صاحب امتیازی قره‌کین بویاجیان
درعلیه قلطه

AREVELIK
JOURNAL ARMÉNIEN
Directeur-Propriétaire
KARÉKIN BOYADJIAN
Cons/ple, Galata

10 PARAS

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ
ԵՐ. ՍՐՄԱՔԷՇԽԱՆԼԵԱՆ

ԳԵՐՄԱՆ ԵՒ ՕՍՄ. ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆՑ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պերլինի ծանանուն նոր դեսպանը վաղը կէս օրէն առաջ ուրա կը ժամանէ։ Ընդունելութեան համար, թէ դեսպանատան պաշտօնականութիւնը և թէ տեղւոյն փոքր ու տմտղան գաղթականութենէն ներկայացուցիչներ կայարանը պիտի գլուխնուին։ Նիզամի փոչային քարի գալուստ մաղթելէ յետոյ, չմոռնանք նշանակել թէ ինքը բանական փափաք և ազնիւ պաշտօնի մը գլուխն է որ կ'անցնի։ Դեսպանի մը գլխաւոր պարտականութիւններէն մէկն է, այն երկրին հետ, ուր ինքը իբր ներկայացուցիչ դրկուած է, իր հայրենիքին փոխադարձ յարաբերութիւնները որչափ կարելի է լաւագոյն կերպով մշակել և բարեկամական ու մտերմական դարձնել զանոնք։ Մեր նոր դեսպանը, իր այս ուղղութեամբ ընելիք աշխատութիւններուն համար, իր առջեւ բանական կարծր ու գժուար մշակելի հող մը պիտի գտնէ, որովհետև այս բոլորէս դերմանական և օսմանեան կայսրութիւններու միջեւ տիրող յարաբերութիւնները անհամեմատելի վիճակի մը մէջ կը գտնուին անկասկած։

Որչափ որ ալ օսմ. նախարարապետը, այս կամ այն նախարարը, յեղափոխական կոմսիկցիութեանց վարիչները, դիւանագիտական խոնարհութեամբ ներքեւցին Օսմանեան Կայսրութեան մէջ տիրող հակագերմանական զգացումներուն հանդէպ, ասոնք արդէն գոյութիւն ունեցող իրողութիւն մը չի կրնար իր դրութիւնը կորսնցնել։ Գերմանացիք իրենք ալ այդ բանին համոզուած են թէեւ, սակայն իրենց չարերը կը պահանջեն որ իրողութիւնները չտեսնելու զարնեն և կամ անոնց տարբեր գոյն մը տան ու չարժանի ներեր անկանոնութիւնն ու անիրաւ ոգիներու դրամներ։ Այս ձգտումներով է որ կ'առաջնորդուին իրենց յօդուածներուն մէջ գերմանական թերթերը մեծ մասամբ, սկսեալ պաշտօնական, պանդանողականներէ, մինչեւ ծայրագոյն ազատականներ։ Թէեւ Գերմանիոյ մէջ գրեթէ չկան բաւական բուն ու ամբողջ խմաստով ազատական թերթեր, սակայն այս բացառութիւնը ընդունինք առ այժմ, քանի որ գէթ կան ստիպմներ որոնք իրենք իրենց այդ անունը տուած են։ Ասոնց մէջ առաջնակարգ տեղ մը կը գրաւէ Պերլիներ Թակեպլաք։ Որ Գերմանիոյն զուրս ալ բանական տարածուած թերթ մըն է։ Պերլիներ Թակեպլաքի հետ հաշուեյարգարութեան մը մտնելէ առաջ, ուզած է իր քաղաքական դիրքը ճշդել։ որովհետեւ իր այդ դիրքէն կարելի պիտի ըլլայ լաւագոյնս դատել իր իսկական արժէքը։ Պերլիներ Թակեպլաք լոկ հրեաներու չնորհուն պաշտպանութեանը համար հիմնուած թերթ մըն է։ Իր ծրագրին հետաքրքրման մէջ հակասեմիտոնց չմասնակցելու համար, ստիպուած է իր ծայրագոյն ազատական ցոյց տալ ինքզինքը։ միւս կողմէ, կասկածութենէն չնայելու համար խոյս կուտայ ընկերվարականներէ, որով չարունակ այդ երկու կուսակցութեանց քաղաքական ուղղութեան մէջեւ կը տարուբերի։ Կառավարական չշրջանակներու վրայ ունեցած իր ազդեցութիւնը հնասար է զէրօի։ (արդէն Գերմանիոյ մէջ ո՛չ մէկ թերթ որ և է ազդեցութիւն ունի վարչութեան վրայ։)

Այս կարճ քայլ ճշդրիտ կերպով արտայայտուած նկարագրի պատկերացումէն յետոյ, դիտելի է ըմբռնել, թէ ինչպէս արդեօք Պերլիներ Թակեպլաք սմինէն ուելի եռանդուն կերպով վր չհանդիսանալ մեր երկրով եւ ինչու։ Հարցադրուած է միշտ ամէն ինչ որոշ կողմնակալութեամբ մը տեսնել ու դատել։ Ասկէ մէկ քանի շաբաթներ առաջ Նոյն թերթին աշխատակից Տէրընպուրգի (գաղթական գործոց Տնօրէնին ծերունի հայրը) առաջնորդող յօդուածի մէջ կը դրէր, թէ Պոլսոյ մէջ ուելի ունեցած հակագերման ցոյցերը մէկ քանի անկարեւոր Հայերու գործերն են։ Երէկ իրենուան թերթին մէջ, Պերլիներ Թակեպլաքի Հռոմի թղթակիցը հետեւեալ բառերը կը դնէ Սէլիմ Մէլհամէ փաշայի որդւոյն Հալիմ պէյի բերանը։

«Օսմ. Կայսրութեան մէջ հոգեղերման հասնող մը գոյութիւն չունի։ Հոն Գերմանիոյ նկատմամբ միակ զգացում մը կը տիրապետէ։ երախտագիտութիւն։ Մեր սպաները Գերմանիոյ մէջ ուսած են և կամ աշակերտներն են Ծոն տէր Կոլցի։ Օսմանցի վաճառականները ուսած ըլլան գերմանական ապրանքները պոյքոթի ենթարկել։ յիմար յերիւրանք(*)։ Թերեւս մէկ քանի այդ օրինակ պատահմանները ընդհանրացուցած ըլլան, մանաւանդ որ ասոնց հեղինակները փատաւորէն մանմանակոմներ չեն։ Նոյնը պէտք է ըսել նաեւ հակագերման ցոյցերու համար, որոնք իբր թէ տեղի ունեցած ըլլան։ Ստոյգ իմ, մէկ քանի պոռպռացողներու գործը եղած ըլլալու է առ։» Այս տողերէն վերջ, Թղթակիցը խղճմտութիւնը կ'ունենայ տուկերելու թէ, նոյնիսկ Հալիմ պէյի կարծիքով, երիտասարդ Թուրքերու հանմակրութիւնները դէպի Անգլիա կը հակին։

Կատարելապէս ծիծաղելի է, երբ Պեր. Թակեպլաք Օսմանցիներու մասնագերմանոց համար եւրոպական դպացումներ տեսնել կը փափաքի։ Արդեօք Գերմանիոյ որ բարեբարութիւններուն համար երախտապարտ ըլլալու ենք։ Մեր այսօրուան ամենաթանկագին ինչքը Սամմանագրութիւնն է։ զայն ձեռք բերելու համար թափուած աշխատութիւններու մէջ Գերմանիան ինչ բաժին ունեցած է։ Մեր մը յեղափոխական կուսակցութիւնը համարձակած է գերմանական հողի վրայ հաստատուիլ ու գործել։ Ով է եղած մեր հին բեմիմը ներքոյզոը ու քաջալերողը և ով է եղած այն յարաբերութիւնները օգտագործելով ինքզինքը պարարտացնել։ Երբ ամբողջ Օսմ. Կայսրութեան մէջ, բռնակալութեան ճիրաններուն տակ հազարաւոր սուրի և հրի գոհերը կ'ըլլային, Գերմանիա ո՛չ թէ միայն չուզեց որ և է պէտք բարձր մը իսկ բարձրացնել, այլ իր բանեան ընթացքով ուելի հրահրեց սիրող խմգմութիւնները։ Վիլհելմ կայսրը իր դէպի Երուսաղէմ և Պոլիս կատարած ճամբորդութիւններով ու բարեխոնարհ ցոյցերով, ինքզինքը նոյնացուց Օսմ. Կայսրութիւնը դէպի կործանում առաջնորդող անխիղճներուն հետ, և անօթութենէ մեռնողներու ինչքերով հարստացողներու ձեռքէն սացած թանկագին նուէրներով ու իր բարեկամ Քրուբի համար ուրուած ապապարանքներով ծանրաբեռնուած, յաղթական իր երկիրը վերադարձաւ, ինքզինքը Իսլամներու պաշտպանը հռչակելով !!։

Պեր. Թակեպլաք պահեմտիք կերպով ջանացեր է Հայերը վարկաբեկել, և ասիկա հենէն ի վեր։ Այս մարդիկը մեր յեղափոխականները ասադակներ ու Հայերուն կողոքման եւ բնաջնջման միակ պատճառները հռչակեցին։ Երիտասարդ Թուրքերու յարժումները ապացոյն ու ապնոց ծրագիրները հեղինեցին։ Հիմա երբ ոյժը յեղափոխականներու ձեռքն է և ուրացում մը անարժէք, սկսած են չողոքրկել մահմմատականութիւնը, Թուրքերը, գրգռելով զանոնք մասնաւորապէս Հայերու դէմ։ Օսմանեան ներկայ կայսրութեան մէջ տիրող ազգերու եղբայրակցութիւնը ո՛չի տիր որ ալ հաստատուն ըլլայ, կրնայ սակայն, իր նախնական քայլերուն մէջ, այս կարգի ազդեցութիւններէ վնասուիլ։ Այս վտանգը մենք աչքի առջեւ ունենալով, բան ամէնէ պէտք է որունենք մեր քաղաքական գործունէութեան ուղղութիւնը։ Ու եթէ հարկ ըլլայ, նոյն իսկ խրատելու չենք, մեր ազ-գերմանասէր զգացումները պահելով հանդերձ, չանա-

(*) Երեսանութիւնը եկաւ պարզացնել, գերմաններուն համար չատ անախորժ կերպով, թէ այդ զգացումը ո՛ր-քան սիրական էր և ուժգին։ Ծ. Խ.

Մի քանի բոլորէից յետոյ լոկի եղաւ հաղորդում ստանալու ձայն, որ հետզհետէ սատականալով և ապա սատիճանաբար նուազելով, վերջը հեղձուցիչ խոխոջի վերածուեցաւ։ Օրիորդը ցնցուեցաւ։ Այդ ակամայ հոգը ծանօթ էր նրան և ամբողջ ամրոցին։ Նա դուրս էր վիժում խորտակուած կուրծքից և փտած թոքերից։ Այժմ դիտէր օրիորդը, թէ ով էր տիկնոջ խօսակիցը։ «Մի բան կայ»... մտածեց նա և լարեց իւր բոլոր ուշադրութիւնը։

Յանկարծ դանդաղանուեցաւ նա, որպէս դանդաղիվում է մի մարդ, երբ կայծակը չանցնում է մերձակայքում և լսելի է լինում որոնման ահեղ գղրդիւնը։ Բայց նրա լսածը երկու բառերը էին միայն. մէկը Մուշեղի անունը, միւսը՝ մի այլ սոսկալի բառ...

Առանձնարանում տիրեց խորին լռութիւն։ Այժմ առաջուայ չշնչիւնն անգամ չէր լսւում։ Երեւում էր, որ տիկնոջ խօսակիցը, վերջին պատասէրը առանալուց յետոյ, դուրս գնաց միւս դռնից, որ բացւում էր դէպի կանանոցի փոքրիկ բակը։

Օրիորդը հեռացաւ իւր դարանից, մտածելով, որ տիկինը կարող էր յանկարծ դուրս գալ և ոչնոնեղ տեսնել նրան։ Նա մօտեցաւ դռնէին դռանը, որ ինքը կողպել էր, բացաւեց, յետոյ սկսեց գորգերի վրայ սփռուած տերեւները և ծաղիկների թերթիկները հաւաքել։ Բարձրը դեռ ընկած էին իրանց տեղում։ Բաւական գործ կար, որ եթէ տիկինը դուրս գալու լինէր, նրան զբաղուած տեսնէր։ Բայց նա ուշացաւ։ Երեւում էր, որ դեռ երկար տանջվում էր նա այն անգութ պատուէրի մասին, որ տուեց իւր հաստատիչ ծառային... Մի քանի ամսում հաւաքեց օրիորդը ծաղիկների տերեւները, ծղօտները և թերթիկները։ Մի քանի անգամ վերջացրեց այդ գործը, բայց դարձեալ, ուելի մանրացնելով, ցրիւ տուեց յատակի վրայ։ Այդ գործողութիւնը կրկնում էր նա, մինչեւ դուրս եկաւ տիկինը։

—Այդ ի՞նչ է, այդ ո՞վ արեց —հարցրեց նա, բարկացած աչքերով նայելով իւր շուրջը։

—Ո՞վ պէտք է անէր, —պատասխանեց օրիորդը, չարուհակելով հաւաքել իւր ցրիւ տուածը.— Ներս եմ մտնում, տեսնում եմ, որ վանդը ամէն ինչ տակնուվրայ է արել. հէնց որ ինձ տեսաւ, խելագար փախաւ։

—Ախ, չարաճճի, —բացականչեց զայրացած մայրը,— երբ պէտք է խելքի գայ այդ աղան։ Հիմա կարող են իսկոյն մտնել հիւրերը և տեսնել այդ անկարգութիւնը։

—Ես խնդրեմ կը հաւաքեմ, տիկին, ասաց օրիորդը, չտարակուսելով իւր աշխատութիւնը։

—Մինչեւ դու կը հաւաքես, դէսօր կը դառնայ; գնա՛ ազատարարներից մէկին ասա, որ գայ ուելէ այստեղ, իսկ ինքդ վազի՛ր պարտէզը, մի նոր փունջ պատրաստիր, դրա տեղը դնելու համար։

Նուարդը չասաց դուրս գնաց։

Սպասաւորները խմբուած էին սեղանատունը, ծիծաղում էին, հռհռում էին, կատակներ էին անում և սեղանն էին պատրաստում։ Նրանց մէջում խառն էր և պատանի Յուսիկը—Նուարդի սիրելին։ Նուարդը հեռուից կանչեց մէկին և յանձնեց տիկնոջ հրամանը, իսկ ինքը վազեց դէպի պարտէզը։

Նրան տեսնելով, Յուսիկի աչքերը վառուեցան։ Նա հեռուից, թէ դէպի ո՛ր կողմը գնաց օրիորդը, մանաւանդ երբ նկատեց, որ խորամանկ աղջիկը մեկնելու միջոցին ձեռքը տարաւ դէպի աջ ականջը։ Այդ նրանց մէջ մի պայմանական նշան էր, որն իմասն այն էր, թէ կանչում է նրան։

Յուսիկը ընկերների ուշադրութիւնը իւր վրայ չը դարձնելու համար՝ մի քանի բոպէ սպասեց, յետոյ զգուշութեամբ դուրս եկաւ սեղանատնից։ Հեռուից տեսաւ նա, որ օրիորդը գնում էր դէպի պարտէզը։ Ինքն եւս պատրաստեց մի այլ ճանապարհով, որ նոյնպէս դէպի պարտէզն էր տանում։

Նա գտաւ իւր սիրուհին վարդենիների թփերի մօտ, բայց ոչ այնպէս ուրախ, որպէս սովոր էր նրան հանդիպել այստեղ։ Նա դեռ նոր էր սկսել մինչեւ իւր փունջը։

—Երեւի, ինձ համար է,—ասաց պատանին և մօտեցաւ գրկելու նրան։

—Դրա ժամանակը չէ, Յուսիկ,—արգելեց օրիորդը։— Ես քեզ կանչեցի մի չա՛տ կարեւոր գործի համար։

—Ինչ գործ,— հարցրեց պատանին վշտացած ձայնով, առաջին անգամ մի այդպիսի սառնութիւն տեսնելով սիրած աղջկան կողմից։

—Դնա՛ Սամուէլի մօտ, մի կերպով հասկացրու, որ իշխան Մուշեղին խնայում տայ, որ նա այսօր մեր տիկնոջ մօտ ճաշի չը գայ... Դնա՛, մի ուշացիր...

Այս ծանր եղանակը, որով արտասանեց օրիորդը այդ խօսքերը, Յուսիկին մոռնալ տուեց իւր սիրային դուրգուրանքը, և նա զարմացած կերպով հարցրեց.

—Ինչո՞ւ Մուշեղ իշխանը չը գայ ճաշի, ի՞նչ կայ...

—Բան կայ... յետոյ կ'ասեմ... դու մի ուշացիր...

—Չէ՞ որ իմ տէրը պէտք է գիտենայ, թէ ի՞նչ բան կայ, որ խնայում տայ Մուշեղ իշխանին։

—Հիմա որ քո տէրը գիտենայ, լաւ չի լինի, սիրելի Յուսիկ, կարելի է մի խռովութիւն ծագէ, ասաց օրիորդը համոզիչ ձայնով.— Թո՛ղ հիւրերը գնան, ես բոլորը կը պատմեմ քեզ և դու կը յայտնես քո տիրոջը։— Դէ՛ դնա, մի ուշացիր։

—Թող տուր երեսդ...

—Գնա՛...

—Գնանէ այդ սիրուն մատներդ...

Յուսիկը խլեց օրիորդի ձեռքը և, մատների ծայրերը համբուրելով, դուրս վազեց պարտէզից։

«Ո՞ տայր ինձ զծուխս ծխանի
«Եւ զառաւօտն Նաւասարդի,
«Զվազելն եղանց
«Եւ զվազելն եղջերուաց.
«Մեք փոխ հարուաք
«Եւ թմբկի հարկանէաք»։

(Շարունակելի)

"ԱՐԵՒԵԼՔ„Ի ԹԵՐԹՕՆԸ — ՐԱՖՖԻ

ԱԱՄՈՒԷԼ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ (24)

ԺԱ.

ԱՆՑԱՂՈՂ ԴԻՒԱՑՐՈՒԹԻՒՆ

Մի ամիսներ առաջ հաւաքեց նա բարձերը, դրեց միմիեանց վրայ և, ձիւնման հեծնելով, սկսեց ոտներով խթահարել և ձեռքերով մտրակել իւր նժոյգին, ուրախ-ուրախ կանչելով «չո՛... չու»... Երբ տեսաւ, որ իւր անշնորք նժոյգը տեղից չէ շարժվում, ճանճրացաւ, և վայր ցատկեց դահուսորակի վրայից, մի այլ խաղալիք գտնելու համար։ Զարմանալի խլեց ծաղկամանների մէջ դրած փունջերից մէկը։ Այդ միջոցին վրայ հասաւ օրիորդը և հազիւ կարողացաւ նրան ձեռքից առնել փունջը։ Բայց ծաղիկները բաւական տրորուեցան։ Նկատելով, որ յանկարծ երեսին հանդիսատ չէ մնալու, օրիորդը քաշեց նրա ձեռքից, համարեա բռնութեամբ դուրս քարշեց դահլիճից և դուռը ներսից կողպեց։ Նա մի քանի անգամ զայրացած կերպով ոտքով խփեց դռանը և հեռացաւ։

Վանանի չարութիւնը թէեւ խլեց օրիորդից մի քանի թանգագին բոպէներ, բայց նրա համար մի գործ պատրաստեց, որի մասին մտածում էր։ Նա վերադարձ վանանի էին, այսինքն միմիանց վրայ դրած երկու բարձերը, մէկը նետեց դաշլճի մի կողմը, միւսը նետեց միւս կողմը։ Վերադարձ նրա տրորած փունջը, քրքրեց, տերեւները արեց, և նոյնպէս ցրիւ տուեց գորգերի վրայ։ Այդ գործողութիւններից յետոյ, նա կրկին մտնեցաւ առանձնարանի դռանը, սկսեցը տարաւ դէպի փակոնքը։

Այժմ ուելի կամոյ էին խաղում։ Հեզն օրիորդը ամբողջ ամրոցով լսելիք էր դարձել, բայց ոչինչ չէր լսում։ Նրա սիրտը բաբախում էր հեռաւորդարձութիւնից և արեան ջերմութիւնը այրում էր թշերը։ Բաւական էր նրան գիտենալ, թէ ում հետ էր խօսում իւր տիկինը։ այդ չտա բան կը պարզէր։ Դռան փեղկը ներքեւի կողմից բոլորովին ուռած կերպով չէր կցուած չրջանակի հետ, մնացել էր մի նեղ բացուածք։ Նա կռացաւ, սկսեց այդ բացուածքից նայել։ Ոչինչ չէր երեւում։

Մի քանի բոպէից յետոյ լսելի եղաւ հաղորդում ստանալու ձայն, որ հետզհետէ սատականալով և ապա սատիճանաբար նուազելով, վերջը հեղձուցիչ խոխոջի վերածուեցաւ։ Օրիորդը ցնցուեցաւ։ Այդ ակամայ հոգը ծանօթ էր նրան և ամբողջ ամրոցին։ Նա դուրս էր վիժում խորտակուած կուրծքից և փտած թոքերից։ Այժմ դիտէր օրիորդը, թէ ով էր տիկնոջ խօսակիցը։ «Մի բան կայ»... մտածեց նա և լարեց իւր բոլոր ուշադրութիւնը։

Յանկարծ դանդաղանուեցաւ նա, որպէս դանդաղիվում է մի մարդ, երբ կայծակը չանցնում է մերձակայքում և լսելի է լինում որոնման ահեղ գղրդիւնը։ Բայց նրա լսածը երկու բառերը էին միայն. մէկը Մուշեղի անունը, միւսը՝ մի այլ սոսկալի բառ...

Առանձնարանում տիրեց խորին լռութիւն։ Այժմ առաջուայ չշնչիւնն անգամ չէր լսւում։ Երեւում էր, որ տիկնոջ խօսակիցը, վերջին պատասէրը առանալուց յետոյ, դուրս գնաց միւս դռնից, որ բացւում էր դէպի կանանոցի փոքրիկ բակը։

Օրիորդը հեռացաւ իւր դարանից, մտածելով, որ տիկինը կարող էր յանկարծ դուրս գալ և ոչնոնեղ տեսնել նրան։ Նա մօտեցաւ դռնէին դռանը, որ ինքը կողպել էր, բացաւեց, յետոյ սկսեց գորգերի վրայ սփռուած տերեւները և ծաղիկների թերթիկները հաւաքել։ Բարձերը դեռ ընկած էին իրանց տեղում։ Բաւական գործ կար, որ եթէ տիկինը դուրս գալու լինէր, նրան զբաղուած տեսնէր։ Բայց նա ուշացաւ։ Երեւում էր, որ դեռ երկար տանջվում էր նա այն անգութ պատուէրի մասին, որ տուեց իւր հաստատիչ ծառային... Մի քանի անգամ հաւաքեց օրիորդը ծաղիկների տերեւները, ծղօտները և թերթիկները։ Մի քանի անգամ վերջացրեց այդ գործը, բայց դարձեալ, ուելի մանրացնելով, ցրիւ տուեց յատակի վրայ։ Այդ գործողութիւնը կրկնում էր նա, մինչեւ դուրս եկաւ տիկինը։

—Այդ ի՞նչ է, այդ ո՞վ արեց —հարցրեց նա, բարկացած աչքերով նայելով իւր շուրջը։

—Ո՞վ պէտք է անէր, —պատասխանեց օրիորդը, չարուհակելով հաւաքել իւր ցրիւ տուածը.— Ներս եմ մտնում, տեսնում եմ, որ վանանը ամէն ինչ տակնուվրայ է արել. հէնց որ ինձ տեսաւ, խելագար փախաւ։

—Ախ, չարաճճի, —բացականչեց զայրացած մայրը,— երբ պէտք է խելքի գայ այդ աղան։ Հիմա կարող են իսկոյն մտնել հիւրերը և տեսնել այդ անկարգութիւնը։

—Ես խնդրեմ կը հաւաքեմ, տիկին, ասաց օրիորդը, չտարակուսելով իւր աշխատութիւնը։

—Մինչեւ դու կը հաւաքես, դէսօր կը դառնայ; գնա՛ ազատարարներից մէկին ասա, որ գայ ուելէ այստեղ, իսկ ինքդ վազի՛ր պարտէզը, մի նոր փունջ պատրաստիր, դրա տեղը դնելու համար։

Նուարդը չասաց դուրս գնաց։

Սպասաւորները խմբուած էին սեղանատունը, ծիծաղում էին, հռհռում էին, կատակներ էին անում և սեղանն էին պատրաստում։ Նրանց մէջում խառն էր և պատանի Յուսիկը—Նուարդի սիրելին։ Նուարդը հեռուից կանչեց մէկին և յայտնեց տիկնոջ հրամանը, իսկ ինքը վազեց դէպի պարտէզը։

Նրան տեսնելով, Յուսիկի աչքերը վառուեցան։ Նա հեռուից, թէ դէպի ո՛ր կողմը գնաց օրիորդը, մանաւանդ երբ նկատեց, որ խորամանկ աղջիկը մեկնելու միջոցին ձեռքը տարաւ դէպի աջ ականջը։ Այդ նրանց մէջ մի պայմանական նշան էր, որն իմասն այն էր, թէ կանչում է նրան։

Յուսիկը ընկերների ուշադրութիւնը իւր վրայ չը դարձնելու համար՝ մի քանի բոպէ սպասեց, յետոյ զգուշութեամբ դուրս եկաւ սեղանատնից։ Հեռուից տեսաւ նա, որ օրիորդը գնում էր դէպի պարտէզը։ Ինքն եւս պատրաստեց մի այլ ճանապարհով, որ նոյնպէս դէպի պարտէզն էր տանում։

Նա գտաւ իւր սիրուհին վարդենիների թփերի մօտ, բայց ոչ այնպէս ուրախ, որպէս սովոր էր նրան հանդիպել այստեղ։ Նա դեռ նոր էր սկսել մինչեւ իւր փունջը։

—Երեւի, ինձ համար է,—ասաց պատանին և մօտեցաւ գրկելու նրան։

—Դրա ժամանակը չէ, Յուսիկ,—արգելեց օրիորդը։— Ես քեզ կանչեցի մի չա՛տ կարեւոր գործի համար։

—Ինչ գործ,— հարցրեց պատանին վշտացած ձայնով, առաջին անգամ մի այդպիսի սառնութիւն տեսնելով սիրած աղջկան կողմից։

—Դնա՛ Սամուէլի մօտ, մի կերպով հասկացրու, որ իշխան Մուշեղին խնայում տայ, որ նա այսօր մեր տիկնոջ մօտ ճաշի չը գայ... Դնա՛, մի ուշացիր...

Այս ծանր եղանակը, որով արտասանեց օրիորդը այդ խօսքերը, Յուսիկին մոռնալ տուեց իւր սիրային դուրգուրանքը, և նա զարմացած կերպով հարցրեց.

—Ինչո՞ւ Մուշեղ իշխանը չը գայ ճաշի, ի՞նչ կայ...

—Բան կայ... յետոյ կ'ասեմ... դու մի ուշացիր...

—Չէ՞ որ իմ տէրը պէտք է գիտենայ, թէ ի՞նչ բան կայ, որ խնայում տայ Մուշեղ իշխանին։

—Հիմա որ քո տէրը գիտենայ, լաւ չի լինի, սիրելի Յուսիկ, կարելի է մի խռովութիւն ծագէ, ասաց օրիորդը համոզիչ ձայնով.— Թո՛ղ հիւրերը գնան, ես բոլորը կը պատմեմ քեզ և դու կը յայտնես քո տիրոջը։— Դէ՛ դնա, մի ուշացիր։

—Թող տուր երեսդ...

—Գնա՛...

—Գնանէ այդ սիրուն մատներդ...

Յուսիկը խլեց օրիորդի ձեռքը և, մատների ծայրերը համբուրելով, դուրս վազեց պարտէզից։

«Ո՞ տայր ինձ զծուխս ծխանի
«Եւ զառաւօտն Նաւասարդի,
«Զվազելն եղանց
«Եւ զվազելն եղջերուաց.
«Մեք փոխ հարուաք
«Եւ թմբկի հարկանէաք»։

(Շարունակելի)

ՌՈՒՍ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՒԱՑՐՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԷՄ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ ՎՏԱՆԳԻ ՏԱԿ

«Գարձ»ի 4 համարին մէջ կը տեսնանք հետեւեալը.

Պետերբուրգի Նովոյ Ռուս թերթը (Նո. 24), հետեւեալն է գրում.

«Ներքին գործերի մինիստրութիւնը հարց է յարուցանել հայ-լուսաւորչական եկեղեցու գործերի կառավարութիւնը կարգաւորելու մասին։

Նրա ժամանակակից վիճակը մինիստրութիւնը համարում է չափազանց քաոսային։

Մինիստրութեան կարծիքով «առանձնապէս այժմ, երբ թափուր է կաթողիկոսական գահը, յարմար կը լինէր վերանայել այն գործող օրէնքները, որոնք որոշում են հայոց պատրիարքի դիրքը, իրաւունքներն ու պարտականութիւնները»։

Այս նպատակով մինիստրութիւնը, եթէ չենք սխալուում Սուլթանի բացակայութեան ժամանակ կարգադրել է արտաքսմանի հայ-լուսաւորչական թիւերին տրուելիք այն հրամանները, որոնցով նրանք կանչւում են մասնակցելու կաթողիկոսի ընտրութեան։ Այնինչ մինիստրութիւնը մտադրութիւն ունէր ընտրութիւնները մի որոշ ժամանակով յետաձգել, մինչեւ որ նրա պատրաստած օրէնսդիրը կ'ստանայ մինիստրների խորհրդի և բարձր օրէնսդրական հիմնարկութիւնների բուվեր։

Բայց որովհետեւ այդ հանգամանքը խիստ կը դանդաղեցնէր հարցը, այդ պատճառով մինիստրութիւնը առաջարկել է արտաքսմանի հայ-լուսաւորչական թիւերին տրուելիք այն հրամանները, որոնցով նրանք կանչւում են մասնակցելու կաթողիկոսի ընտրութեան։ Այնինչ մինիստրութիւնը մտադրութիւն ունէր ընտրութիւնները մի որոշ ժամանակով յետաձգել, մինչեւ որ նրա պատրաստած օրէնսդիրը կ'ստանայ մինիստրների խորհրդի և բարձր օրէնսդրական հիմնարկութիւնների բուվեր։

Բայց որովհետեւ այդ հանգամանքը խիստ կը դանդաղեցնէր հարցը, այդ պատճառով մինիստրութիւնը առաջարկել է մինիստրների խորհրդին վճռել, «մէ արդեօք ուելի համապատասխան չը պէտք է համարել այդ գործի վերջնական քննութեանը հէնց այժմ ձեռնարկելը, համաձայն հիմնական օրէնքների 89դ յօդ.»։

«Վերջին 25 տարուայ ընթացքում հայ-լուսաւորչական եկեղեցու վարչութեան կազմակերպումը արագ քայլերով առաջ գնաց և ներքայումս հասել է իր զարգացման բարձր աստիճանին։ Իր բոլոր կարգադրութիւնների, գրկուցումների և այլ գործողութիւնների մէջ Էջմիածնի կաթողիկոսները ցոյց են տուել ձգտում կատարելագործ ապահովելու կաթողիկոսական իշխանութիւնը կուսակրոնական ազդեցութիւնից, խիստ արհամարհանքով վերաբերուելով մեր օրէնքներին և իշխանութեան հանդէպ։ Ներքին գործերի նախարարութիւնը, որ իշխան Մուշեղին թեացում տայ, որ նա այսօր մեր տիկնոջ մօտ ճաշի չը գայ... Դնա՛, մի ուշացիր...

Այս ծանր եղանակը, որով արտասանեց օրիորդը այդ խօսքերը, Յուսիկին մոռնալ տուեց իւր սիրային դուրգուրանքը, և նա զարմացած կերպով հարցրեց.

—Ինչո՞ւ Մուշեղ իշխանը չը գայ ճաշի, ի՞նչ կայ...

—Բան կայ... յետոյ կ'ասեմ... դու մի ուշացիր...

—Չէ՞ որ իմ տէրը պէտք է գիտենայ, թէ ի՞նչ բան կայ, որ խնայում տայ Մուշեղ իշխանին։

—Հիմա որ քո տէրը գիտենայ, լաւ չի լինի, սիրելի Յուսիկ, կարելի է մի խռովութիւն ծագէ, ասաց օրիորդը համոզիչ ձայնով.— Թո՛ղ հիւրերը գնան, ես բոլորը կը պատմեմ քեզ և դու կը յայտնես քո տիրոջը։— Դէ՛ դնա, մի ուշացիր։

—Թող տուր երեսդ...

—Գնա՛...

—Գնանէ այդ սիրուն մատներդ...

Յուսիկը խլեց օրիորդի ձեռքը և, մատների ծայրերը համբուրելով, դուրս վազեց պարտէզից։

«Ո՞ տայր ինձ զծուխս ծխանի
«Եւ զառաւօտն Նաւասարդի,
«Զվազելն եղանց
«Եւ զվազելն եղջերուաց.
«Մեք փոխ հարուաք
«Եւ թմբկի հարկանէաք»։

(Շարունակելի)

նութեանց պահանջներին. այդ կարգի գործունէութեան ընթացքում միշտ աջակցութիւն և համակրանք էին գտնում նրանց չբաւարարող անձերից և մինչև իսկ էջմիածնի սինօդի անդամներից։

«Իրերի դրութիւնը այդ հիմնարկութեան մէջ վերջին ժամանակներս հասել է ծայրայեղ սանձարձակութեան ու կամայականութեան։ Ո՛չ սակաւ սինօդի անդամները, ստորագրած չանգիտական միաձայնութեամբ, հրաժարւում էին ներկայ գտնուելու սինօդի այն նիստերում, որտեղ չը պիտի դեկուցէին ներթից դուրս այն գործերը, որոնցից նրանք կարող էին ստանալ կողմնակի ազօրմնի եկամուտ։

«Պատրիարքները հէնց իրենք էին խախտում սինօդի գործավարութեան կարգը, բացակայելով նրա նիստերին ու տնտեսագիր թղթերով դատախազի բողոքները սինօդի անկանոն որոշումների դէմ. այսպիսով իրենք պատրիարքները չափազանց նպաստում էին հայ երիտասարդութեան լիցների իրագործման՝ տեսնել էջմիածնի սինօդի ու նրա դատախազի պաշտօնի վերացումը, որպէս այնպիսի մի կառավարական հաստատութիւնների, որոնք սահմանափակում են կաթողիկոսի իրաւունքները»։

Ապա թերթը առաջ է բերում մի քանի դիտողութիւններ Խրիմեանի անձնաւորութեան մասին և վերջացնում է յօդուածը հետեւեալ խօսքերով.

— «Այդ հարցի վերաբերմամբ մինիսթրների խորհրդում տեղի ունեցած կարծիքների փոխանակութիւնը և վճիռը չատ կարեւոր է, որտեղից դա պարզ կերպով ցոյց է տալիս, թէ մինիստրական ներկայ կազմինումը ինչպիսի վերաբերմունք է ցոյց տալիս դէպի այդքան փափուկ ազգային մի հարց։»

Նիստերին մասնակցել է և Կովկասի փոխարքան, որ բոլորովին համաձայն չէ եղել վեկուցանողի կարծիքների հետ։

Մի նկատողութիւն եւս։ Կաթողիկոսեան ընտրութիւնները յետաձգած չեն։ Նրանք տեղի են ունենալու, ինչպէս առաջ նշանակած էր, հոկտեմբերի 30ին։

ՅԱՐՁԱԿՈՒՄԻ ԴԻՄԱՑ

Աբեւելքի առտուայ համարում Թիֆլիսի Գորձ թերթից արտատպած տեղեկութիւնը ռուսական ներքին գործերի նախարարութեան մի նոր հակա-հայկական դաւադրութեան մասին, չի կարող երեն վերջ չը բերեալ Հայ նահատակութեան ուշադրութիւնը՝ նոյն իսկ ներկայ, տաղնապով և քաղաքական լայն, խորունկ հարցերով լեցուն պահուն։

Նախ և առաջ պարզւում են այն պատճառները, որոնց հետեւանքով ռուսական կառավարութիւնը այսքան ուշ, միայն 10 ամսից յետոյ յանձնեց կաթողիկոսական ընտրութեան հրաւիրագրերը ոչ-ռուսական Հայ թեմերին։ Այդ պատճառները այլեւս չը պիտի որոնել այս կամ այն պատահականութեան, ռուս պաշտօնեաների կամ հայկական կրօնական-վարչական հաստատութիւնների անհոգութեան կամ անվարժութեան մէջ, այլ պարզապէս նրանում, որ ռուս կառավարութիւնը որոշելով կազմել նոր կանոնագրութիւն Հայ Կաթողիկոսութեան և Ռուսական եկեղեցու համար՝ նախամտածած կամայականութեամբ ձգձգել է հրաւիրագրերի յանձնումը՝ մինչեւ իր նոր յարձակումներդրի վերջնական ձեւակերպումը։

Մեզ հասած լուրերական տեղեկութիւնները վերաբերում են սեպտեմբեր ամսի սկիզբի օրերին։ Դեռ ևս յայտնի չէ, թէ ռուս նախարարների Խորհրդի կողմից ընդունուած է արդեօք նեղքին գործերի նախարարութեան առաջարկը «Հայ Կաթողիկոսի դերի, իրաւունքների և պարտականութիւնների» վերաբերմամբ մի նոր օրէնսդրութիւն կազմելու մասին, սակայն այն հանգամանքն արդէն ակներեւ է, որ Սաօլիպինի վարչութիւնը բռնակալական և ընտաբարական մի նոր գործի լրջօրէն պատրաստում է։ Եւ ինքն էլ զգալով, որ չափազանց դաժիր է իր այս նոր քայլը, համաձայնութիւն չունի մինչեւ իսկ իրեն հրաւ և հնազանդ Դումայի քննութեանը յանձնել մշակուած կամ մշակուելիք նոր օրինագիծը, ուստի մտադիր է, ինչպէս հաղորդում է Նովայա Ռուս թերթը, այն անցկացնել ռուսական հիմնական օրէնքների 89րդ յօդուածի համաձայն, այսինքն միայն նախարարների խորհրդի և Նիկոլայ Զարի հաճութեամբ, կամ աւելի պարզ ասած՝ կամայականօրէն մի նոր օրէնք հաստատել Ռուսաստանում։

Տասնեակ տարիների հայակերական քաղաքականութիւնը Ռուսաստանում իր գրելիքը դեռ բարձր բռնած է պահում։ Բարբարոսութեամբ և անզգամութեամբ միայն օսմանեան հին ռէժիմին նման և հաւասար ռուս կառավարութիւնը, կախարդներով, զինուորական և բացարձակ պատգամներով, դրեական, հայկական, բանաւորական և գիւղացիական ջարդերով երկիրը կառավարող այդ իշխանութիւնը այսպիսով դալիս է մի նոր մարտահրաւէր կարդալու հայ հանրութեանը, որը բողոքելու, կռուելու, ընդվզելու ամբողջ պարտականութիւնն ունի, որովհետեւ՝ նախ՝ ընտաբարամ, այսինքն ոճրագործութեան մի նոր ակտ է կատարւում կամ ծրագրում է դեռ եւս, և երկրորդ — ու գլխաւորապէս — որովհետեւ այդ հարուածը՝ ուղղուած անմիջապէս հայ կաթողիկոսութեան և առհասարակ կրօնական-եկեղեցական վարչութեան դէմ, ամենացնցող չափով և ուժգնութեամբ վտանգելու է հէնց հայ ժողովրդական շահերը։

Հայ եկեղեցին Հայ ժողովուրդը չէ։ Եւ ոչ էլ հայ-լուսաւորչական եկեղեցին է վերաստեղծելու մեր կեանքը, և մեր առաջադիմութիւնն ու մեր զարգացումը դարձնելու։ Ընդհակառակը բաղմաթիւ դէպքերում իրար սրամագծօրէն հակադիր են Հայկական Վերածնունդի և հայ հոգեւորականութեան ու եկեղեցականութեան շահերը, սակայն ռուս կառավարութիւնը, կախարդելով հայ եկեղեցական վարչութեան կանոնագրութիւնը՝ միակ նպատակն ունի վերջ տալ նրանց կուսակրական ինքնուրոյնութեան այն մնացորդներին Ռուսաստանի սահմաններում, որոնք դեռ եւս պահպանած կան Հայ հանրութեան մեջտեղում։

Կովկասեայ դպրոցներն ու Ռուսաստանի մէջ գտնուող հայ ժողովրդական ստացուածքը՝ եկեղեցական կալուածները՝ գործող կառավարական օրէնսդրութեամբ գտնւում են հայ հոգեւոր վարչութեան ու կաթողիկոսի իրաւասութեան տակ։ Փաստօրէն, իրականութեան մէջ թէ դպրոցները և թէ եկեղեցական կալուածները կառավարւում են ոչ թէ հոգեւորականութեան, այլ ժողովրդի ընտրեալների ձեռքով։ Այդ վերջին հանգամանքն է, որ եւ դպրոցները և եկեղեցական կալուածները թանկագին ու հարգաւոր է դարձնում մեր ժողովրդին, բայց նոյն այդ երեւոյթն է, որ ռուսական բռնակալութիւնը զինել է հայ ժողովրդական այդ ստացուածքների դէմ, որովհետեւ ժողովրդի ձեռքով կառավարւելով հայ դպրոցներն ու եկեղեցական կալուածները ծառայում են միջոց հայկական առաջադիմութեան ու կրթութեան համար, մինչդեռ համաարած խաւարի վրայ իր գոյութիւնը հաստատած ռուս կառավարութեան մըշանջնական ձգտումն է խեղդել՝ ինչպէս պետութեան բոլոր մուս ժողովուրդների՝ նոյնպէս և հայ ժողովուրդի կանոնաւոր ազատ կուլտուրական զարգացումը։

Եթէ ռուս կառավարութիւնը յայտնի՝ սահմանափակելով և կրճատելով հայ կաթողիկոսութեան իրաւունքներն ու իրաւասութիւնները՝ էջմիածնի ամբոխապետն իր ներքին գործերի նախարարութեան գերագոյն հսկողութեանն ենթարկել, այն ատեն նա հեշտութեամբ իր ձեռքն առած կը լինի նաեւ հայ դպրոցներն ու եկեղեցական կալուածները, ու իրականացած իր վաղեմի տենչերից մէկը, որի համար նա այնպիսի յանդգնութիւն, բայց և ապարդիւն քայլեր առաւ 1884, 1897, 1903 թուականներին։ Փակելով հայ դպրոցները, աւազակաբար յափշտակելով հայ ժողովրդական ստացուածքները, նա վերջ ի վերջոյ, անկարող դիմադրելու ժողովրդական կռուին, տարսրած եղաւ թէ մէկը և թէ միւսը վերադարձնել անիրաւուած Հայութեանը։

Հին նպատակին հասնելու համար թշնամին այժմ նոր քայլեր է անում։ Հաւանօն այս անգամ կենտրօնին է ուղղած։ Ցարձակումը կատարելու է իրաւասիրող վրայ՝ նրան սեփական իրաւունքներից զրկելու համար։ Սակայն մի անգամ նա զգաց թէ ինչ ծանր գին է ստիպուած լինում վճարել իր հանգնակական յանդգնութիւնների համար։ Այս անգամին, իր զրգռելիք այս նոր կռուից էլ նա պատկան ծանր զոհողութիւններով և պատկան չափով ամօթալի պարտութեամբ չի դուրս գայ, որովհետեւ վստահ ենք, թէ երկարաեւ կռիւները, տասնեակ տարիներ անընդհատ պայքարը ոչ թէ սպառել են ռուսահայութեան մարտական-դիմադրական ուժերն ու կորովը, այլ ընդհակառակը այն աւելի կռել և կոփել են։

Թ. Ռ.

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Անհաւատիկ երեկ իրիկուն առնուած վերջին լուրերը օրուան հաղորդական իրենց դիրքերու մասին.

Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Պ. Իզվոլսքի, որ Լոնտոն կը գտնուի, կիրակի օրը տեսակցեցաւ Անգլիոյ արտաքին գործոց նախարարին և խորհրդակցեցին հետ։ Սրը Լուտաբա Կրէյգի հետ տեսակցութիւնը մէկուկէս ժամ տեւեց։ Այդ մասին պաշտօնական զեկոյց մը չհրատարակուեցաւ, բայց Ռիւթէր կը հաղորդէ թէ Անգլիոյ ու Ռուսիոյ արտաքին գործոց նախարարներուն միջեւ կարծիքներու այդ նախնական փոխանակութիւնը յուսալի կ'ընծայէ գոհացուցիչ լուծում մը ներկայ տագնապին։ Երէկ ալ երկու նախարարները պիտի խորհրդակցէին։

— Լուտաբա թագաւորը, կէսօրէն ետքը, ընդունեց Պ. Իզվոլսքին։ Դիւրերը արքայական պալատին մէջ թագաւորը սեղան մը տուաւ ի պատիւ Պ. Իզվոլսքիի։ Ներկայ էր նաեւ Լոնտոնի ռուս դեսպան Պէնքէնտորվ կոմսը։ Պ. Իզվոլսքի, կիրակի կէսօրէն ետքը, այցելութիւն տուաւ մէկ քանի օտար դեսպաններու։

— Կ. Պոլսոյ անգլիական նախկին դեսպան Սրը Տրըմնտ Ուոլֆ մեռաւ։ Մայիսի մէջ ծնած էր 1830ին։

— Հանդէսին հետեւեալը կը հեռագրեն Աթէնք կիրակի օրուան թուականով. —Երեսփ. Ժողովը, որ արտասովոր նիստի հրաւիրուած է, այս իրիկուն պիտի գումարուի։ Պաշտօնական օրակարգը կը ծանուցանէ թէ Կրետէի կառավարութեան նախագահը նստաշրջանը պիտի բանայ Յունաստանի թագաւորին անունով։ Օտար տէրութեանց հիւպատոսները և զինուորական իշխանութիւնները հրաւիրուած են ներկայ գտնուիլ այդ նստաշրջանին բացմանը։ Երկրորդ հեռագիր մըն ալ հետեւեալը կը ծանուցանէ.— Ամէն կողմ մեծ խանդավառութիւն կը տիրէ։ Բոլոր թաղամասերը քառէրկեցին կղզին անկախութիւնը և Յունաստանի կցուիլը։ Բոլոր երեսփոխանները ժամանակին Հանրաժողովին հասած չըլլալով, Երեսփ. Ժողովին գումարումը վաղուան յետաձգուեցաւ։

—Ռումանիոյ Կարոլ թագաւորը հանդիսաւորապէս ընդունեց օսմ. նոր դեսպան Սաֆա պէյը, որ իր յանձնարարագիրները մատոյց։ Կարոլ թագաւորը այդ առթիւ յիշեց Թուրքիոյ և Ռումանիոյ միջեւ եղած բարեւոք յարաբերութիւնները երկու երկիրներու փոխադարձ շահերուն համար, յետոյ մաղթանքներ ըրաւ Սուլթանին առողջութեանը ու երջանկութեանը համար, որպէս զի անոր կայսրութիւնը բարգաւաճի և զարգանալ խաղաղ ու հանդարտ կերպով։ Կարոլ թագաւորը համոզում յայտնեց թէ օսմ. կայսրութիւնը աւելի եւս պիտի ամրապնդուի երբ գրգռիչ խնդիրները կարգադրուին, ամէն կողմէ յայտնուած խաղաղասէր զգացումներու և գրացի Պուլկարիոյ հետ հաստատակիր բարեւոյ յարաբերութեանց շնորհիւ։

— Պերլինի մէջ ժողովուրդը, կիրակի օրը, առջի օրերէն աւելի մեծ ցոյցեր կատարեց. նոքին գահաժառանգ իշխանին պատասան առնիւ գնաց և համակրութեամբ ողջունեց։ Իշխանը շնորհակալութիւն յայտնելով ըսաւ.— «Կը պանծամ զինուորը բլլալուս համար. նաեւ՝ հարկին հրամանատարը բլլալու։ Կամուրջներուն ժողովուրդի մը որ պատրաստ է մեռնիլ իր ազգութեանը և պատուոյն համար։

— Ֆոբրիկեն տէրլա Սուրա, ըսելէ յետոյ թէ Իտալիա բնաւ նախապէս իր հաւատութիւնը չէ տուած Պոմպայի ու Հէրսէքի Աւստրիոյ կցուելուն, կը յարէ թէ Իտալիա՝ նոյն իսկ տակաւին չէ ընդունած կատարած իրողութիւնը և թէ կը շարունակէ առջի օրերուն իր վերապահումը։ Նոյն թերթը կը յարէ թէ Վիքտոր Էմմանուէլ թագաւորը դեռ չէ պատասխանած Ֆրանց Եոզէֆ կայսեր ինքնագիր նամակին։ Նաեւ Իտալիոյ կառավարութիւնն ալ տակաւին չէ պատասխանած աւտրիական ծանուցագրին։

— Լոնտոնի քաղաքական շրջանակներուն մէջ կ'ըսուի թէ Թուրքիա պէտք է վերջին բառը արտասանէ նեղութիւններուն մէջ, որոնք Թուրքիոյ անհրաժեշտ ու տնվիճելի ստացուածքներն են։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԵՍՊԱՆԱԽՈՐՀՈՒՐԴԸ

Վիեննական թերթերը կը ծանուցանեն թէ մօտերս ռուսական աւտրիական մը պիտի ներկայացուի եւրոպական դահլիճներուն Պերլինի դաշնադրութիւնը ստորագրող տէրութիւնները դեսպանախորհուրդի մը հրաւիրելու։ Միտքասցի ազգութիւնը տարտնոլուած կ'երեւայ։ Իսկ Իտալիայինը իրրեւ չատ հաւանական։ Անգլիոյ դաւով, մէկ կողմէ կը ծանուցուի թէ իր հաւատութիւնը այն ատեն պիտի ազ երբ ճշդուին խորհրդակցութեան ենթակուելիք առարկաները, մինչդեռ միւս կողմէ կը հաւատուի թէ դիտողութիւն պիտի չընեն, նոյն իսկ եթէ ծրագրուած դեսպանախորհուրդին մէջ նեղուցներու ինդիրը դնուի։ Սեւ Լերան վաճառականութեան և Սերպիոյ դրօշին Ազրիական ծովին մէջ վաճառականութիւն։ Նոյն ծովին և Այպանիոյ ու Սերպիոյ միջեւ փոխադրութեանց միջոցներուն կանոնաւորումը։ Սեւ ծովի և Միջերկրականի միջեւ նաւադանութեան կանոնաւորումը։

—Պերլինէն վերջին հեռագիր մը կը ծանուցանէ թէ Գերմանիա ընդունած է միջազգային դեսպանախորհուրդը և կը ջանայ Աւստրիոյ վերջնական հաւանութիւնը ձեռք բերել, որ սահմանափակ ծրագրի մը վրայ կը պնդէ։

—Օսմ. Հանրային Պարտքի վարչութիւնը գրեց եվրոպական նախարարութեան թէ դեսպանախորհուրդին գումարման առթիւ Օսմ. Տէրութեան չարը կը պահանջէ հարկ եղած ձեռնարկներուն ընել, որպէս զի Պուլկարիոյ եման Սերպիա, Սեւ Լեռ ու Յունաստան ալ, Պերլինի վեհաժողովին դումարման պահուն եղած քանակութեան համաձայն, ըստ նոյն դաշնագրութեան մասնակցին օսմ. հանրային պարտքին։

ԿՐԵՏԷԻ ԽՆԴԻՐԸ

Լոնտոնէն կը հեռագրեն թէ չորս մեծ տէրութեանց հիւպատոսները, այսօրուան, ծանուցագիր մը պիտի տան Հանրա գրասենեակ որ Կրետէի կառավարութեան նիստերուն ներկայ գտնուող արտասովոր գումարը Զաքմիսի, հրաւիրելով զայն սպասել, որպէս զի Կրետէն Յունաստանի կցելու խնդրոյն համար տէրութիւնները որոշում մը տան։

—Վերջին լուրերու նայելով, Կրետէի խնդիրը այնչափ չզարեցնիր միտքերը, վասն զի լուծուած պէս կը նկատուի։ Տէրութիւնները բոլորն ալ հաստատակամ են իրաց վիճակը պահպանելու։ Յունաստան, նկատողութեան առնելով այդ իրողութիւնը, որպէս է չի հաւանիլ Կրետացիներուն ընթացքին՝ նոյն կղզին Յունաստանի կցելու համար, միայն թէ խնդրած է որ դումարուելիք դեսպանախորհուրդին մէջ այդ խնդիրն ալ նկատողութեան առնուի, բայց հիմակուընէ կարելի չէ այդ մասին դատաւորութիւն մը ընել, վասն զի դեսպանախորհուրդին օրակարգը առաջնորդ պիտի սահմանափակուի։

—Բ. Դուռը նկատելով որ հելլէն կառավարութիւնը ընդունած և ծանուցած է Կրետէի միացումը, Կ. Պոլսոյ հելլենական դեսպանատան ծանուցագիր մը զրկեց և յայտարարեց թէ հարկ է նկատողութեան առնել որ Կրետացիներուն միացման մասին ըրած ձեռնարկէն առաջ նախապէս կրնային իսկական ազրով՝ Օսմ. Տէրութեան պաշտօնապէս տեղեկութիւն հաղորդելու էր և թէ կրնայ Օսմ. Տէրութեան սեպհականութիւն մը գաղտիարը տալ։»

—Թան ալ կ'ըսէ թէ հին Թուրքերը կ'ըսեն թէ ներկայ կացութեան պատասխանատուները Երիտասարդ-Թուրքերն են։ Այս վերջիններն ալ կը յայտարարեն թէ ներկայ դէպքերը հետեւանքը կը կազմեն հին դրութեան սխալներուն։

ԻՆՁՈ՛Ի ՀԱՄԱՐ

Եհեի Կազէտա «Մեր՛ոյ համար» խորագրով հետեւեալը կը գրէ իր երեկուայ թիւին մէջ.— «Երէկ, Խրրդայի Շէրիֆի այցելութեանը առթիւ տեսարանի պարտադանները հանդիսաւոր եղանք։ Կը կարծէինք թէ բռնակալութեան շրջանին վերաբերող սովորութիւնները այլ եւս վերացած են. մինչդեռ կամուրջին տակի անցքերը նոքին գոյութեան և Վասիլի շտաբնատպին երթեւեկութիւնները մինչեւ ժամ 7½ դադրեցան։ Իրենց հիւանդին բժիշկ հասցնելու ճամարդող խեղճերը երթուս-երեք ժամ արտասուելով սպասեցին։ Մինչդեռ վեհապետը ու ազգը, հայրը ու որդին միաբան մտան կը ճանչնան և միաբան կ'ողջագուրեն, չկրցանք հասկնալ թէ ինչո՛ւ համար ատանց միջեւ այդ տեսակ անջրպետներ կը թողուին։ Կը հարցնենք. ինչո՛ւ։ Հոս ու հոն անհաւասկան զանազան դէպքեր կը պատահին։ Մէկը միւսին հետ կը վիճի. բնական բան մըն է որ ամէն ատեն այդ տեսակ դէպքեր պատահին։ Ոստիկանութեան պարտքն է դէպքը և այդ առթիւ ժողովրդեան միջեւ առաջ եկած յուզումը հանդարտեցնել, մինչդեռ բոլոր այդ դէպքերուն առաջքը կ'առնուի ժողովրդեան միջամտութեամբը։ Մինչեւ ե՛րբ ոստիկանութիւնը իր պարտականութիւնը պիտի չանչնայ, ի՛նչու մինչեւհիմա չի կատարուիր ոստիկանութեան կազմակերպութիւնը և անոնց պարտականութիւնները չեն հաղորդուիր իրենց։ Թաղականական պաշտօնեաներէ պաշտօնէ դադրածներ չկան. ամէնքն ալ իրենց պաշտօնը կը շարունակեն։ Մինչդեռ փողոցներուն մէջ անոնց գոյութիւնը ապացուցանող մարդութիւն ու կանոնաւորութիւն չի տեսնուիր։ Կամուրջը մինչեւ ժամ 6-7, բանջարեղէնի վաճառատոցի մը վերածուած է։ Անցուդարձը անկարելի է։ Թողունք կառքերը, հետեւան զացողներն իսկ չեն կրնար անցնիլ։ Այս վիճակը տակաւին՝ օրէն պիտի չարունակէ։ Եէնի ճամբի հրապարակն զատ ուրիշ տեղ չկա՞յ բանջարեղէն վաճառելու համար։ Հանրութիւնը տակաւին կը նեղուի բռնակալութեան շրջանին վերաբերող սովորութեանց շարունակութենէն։ Կը մտածենք ու կը մտածենք և պատճառը չենք կրնար գտնել. վերջապէս պատճառ կրնայ, խեղճ թաղապետութիւնը դեռ արթնցած չէ, բայց ի՛նչու։»

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԱՆԳԼԻԱ

Իզսատ հետեւեալը կը գրէ.— «Անգլիա ուզելով գործնականապէս չնչտել օսմ. սահմանադրական կառավարութեան մասին իր ունեցած անկեղծ բարեկամութիւնը, որոշած է որ դէպի արեւելեան ջուրերը ճամբայ ելած իր նաւատորմիղը Պիրէնէն նախ Սելանիկ և յետոյ Պէյրութ (Տարսանէլի բերանը) այցելէ։ Այն բարեկամական բարձր զգացման բերմամբ զոր Օսմանցիները կը ածեն Անգլիացիներուն նկատմամբ, կ'ուզենք որ այդ նաւաբաժինէն գնան նաեւ մը կ. Պոլսոյ նաւահանգիստը այցելէ։ Օսմ. բոլոր երկիրներէն դէպ ի Անգլիա ղրկուած ողջոյնները մեղի տրուական կուգան։ Կ'ուզենք որ մեր Անգլիացի բարեկամներուն ձեռքերը մեր ձեռքերուն մէջ առնելով անկեղծօրէն սեղմենք։ Թէեւ այս պարտականութիւնը կ'ուզենք մինչեւ Լոնտոն երթալով հոն կատարել, սակայն այս միջոցիս մեր երկրին մէջ կարգադրուելիք գործերը արգելք կ'ելլան։ Կը խնդրենք Անգլիոյ ծովակալութենէն որ մինչեւ մեր ջուրերը եկած անգլիական նաւաբաժինէն զէթ նաւ մը կ. Պոլիս գայ։»

—Անգլիական մարտանաւ մը կիրակի օրը Իզմիրի նաւահանգիստը ժամանեց։ Հրամանատարը այցելութիւններ փոխանակեց Մեհիտիի կարգերին հրամանատարին հետ. նաեւ երկու մարտանաւերը զիրար ողջունեցին։ Անգլիական մարտանաւը ծանոյց Մեհիտիի հրամանատարին թէ անգլիական նաւաբաժինը կիրակի Իզմիրի նաւահանգիստը պիտի ժամանէ։

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԳԵՐՄԱՆԻԱ

Պերլինէն հետեւեալը կը հեռագրեն Սապահի.— Այս տեղի չրջանակներուն մէջ մտահոգութիւն կը պատճառէ Թուրքիոյ հանրային կարգերին թշնամական զգացումներուն յանդիմանումը Գերմանիոյ դէմ։ Դիմումագիր մը, որուն անունը յայտնելու արտօնուած չեմ, ըսաւ.— «Ներկայ քաղաքական կացութիւնը վտանգաւոր է Գերմանիոյ համար, որ Աւստրիայէն զատ ուրիշ լուրջ դաշնակից չունի։ Առաջնակ բնաւ տեղեկութիւն չունինք Պոմպայի և Հէրսէքի կցումին։ Մենք բնաւ հաւանական չէինք նկատեր որ Աւստրիա այս միջոցիս այդ տեսակ ընթացքի մը հետեւէր, բայց կցումին հետքը պարտաւոր ենք պաշտպանել մեր դաշնակցին քաղաքականութիւնը։ Այս խնդիրը, որուն վրայ կ'ուսնայ մեր քաղաքական չեղքութիւնը, զմեզ դժուարին կացութեան մը մէջ կը թողու մեր դաշնակցին՝ Աւստրիոյ և մեր ամէնէն կարեւոր բարեկամին՝ Թուրքիոյ միջեւ։ Պուլկարիոյ խնդրոյն առթիւ խիստ ազդարարութիւններ ուղղեցինք Սոֆիա։ Մինչեւ որ երկաթուղիի և անկախութեան խնդիրներուն համար Թուրքիոյ հետ չարամարի անոր թագաւորութիւնը պիտի չը ճանչնանք։ Յառաջիկայ դեսպանախորհուրդին մէջ օսմ. չտնէրը բարեկամաբար և նոյն իսկ անձնուիրութեամբ պիտի պահպանենք, բայց մեր լրագիրներն ալ ներկայ վիճակը նկատողութեան առնելով պէտք է եւ կենան մեղի համար անկրաւ և մեր հայրենիքին համար վնասակար մեղադրանքներէ։»

ՄԱԿԵԴՈՆԻԱ

Սերսիկիէն Սեպտ. 26 թուական հեռագիր մը կ'ըսէ.— Երէկ պիտի բացուէր մակեդոնական յեղափոխականներու ընդհանուր Համաժողովը՝ Սանտանսքիի և Մաթովի միջեւ համաձայնութիւն մը գոյացնելու համար։ Իշխանութիւնը արգիլեց սակայն Համաժողովին գումարումը։ Համաժողովի մասնակցութեան համար հոս հասած էին Սանտանսքի և իր կուսակիցներէն Խր. Զէրնորիչէվ, Զուտ. Դանթարճիէվ, Կայէրով, Պուլտով, Բանդիտա, Սարիմոլսքի, Թասքաման և Հոյսուվէլեթ։ Մաթովի և Սանտանսքիի միջեւ համաձայնութիւնը կասարուած իրողութիւն մըն է։ Երկու հատուածներու համերաշխ գործունէութեան առաջին պայմանն էր Սանտանսքիի մեկնացումը։ Դիչերը ժամը 9ին էկէսին Սանտանսքի իր երկու թիկնապահներու Մրցо Սամարճիէվի և Թաչքо Աթանասովի հետ «Պոշնագ-Խանի» մէջ նստած պահուն՝ անծանօթ անձերէ յարձակում կրեց և ծանրապէս վիրաւորուեցաւ կուրծքին, իսկ ինոր երկու ընկերները հոն մեռան։ Սանտանսքի փոխադրուեցաւ խարսկան հիւանդանոցը։ Կեանքը վտանգի մէջ է։

—Վերջին լուրի մը նայելով Սանտանսքիի վէրքը բուժուելու վրայ է։ Անոր վիրաւորիչը բնաւ ազդեցութիւն մը չէ բրած Մակեդոնիոյ մէջ։

ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոնէն կը հեռագրեն Թանի.— Անգլիոյ ծովային պաշտօնատունը հիմա կը քննէ Տարսանէլի խնդիրը, որ անշուշտ պիտի յարուցուի յառաջիկայ դեսպանախորհուրդին մէջ։ Անգլիոյ կառավարութիւնը, փափաքելով ըլլալով Ռուսիոյ հետ ամէնէն բարեացակամ յարաբերութիւններ պահել, իր ընթացքը պիտի համաձայնեցնէ ծովային նախարարութեան դատողութեանը։

—Սապահ բոլորովին կը հերքէ Նոյէ Թուրքայի այն լուրը, որուն համաձայն Սերպիոյ դեսպանը ծանուցած ըլլայ Բ. Դրան թէ աւտրիական սահմանադրութիւն վրայ 160,000 սերպ և 40,000 Սեւ Լեռնցի զինուորներ պատրաստ կը գտնուին.

—Հաստատապէս կը իմացուի թէ՝ որոշուած է Հիլմի փաշան Պոլիս կանչել և ներքին գործոց նախարար անուանել։ Այս լուրը կը հաստատուի նաեւ Սելանիկի հիւպատոսական շրջանակներու մէջ, որոնք այս անուանումը կը նկատեն Երիտասարդ-Թուրքերու կողմէ պատրաստուած հարուած մը. Մակեդոնիոյ բարենորոգման գործին և ընդհանուր առմամբ Եւրոպայի միջամտութեան։ Նոյնպէս Կ. Պոլսոյ քաղաքական շրջանակներու մէջ լուր կայ թէ՝ Լոնտոնի օսմ. դեսպան Բիֆամի փաշա Թէվֆիկ փաշայի տեղ արտաքին գործոց նախարար պիտի անուանուի։ Վերջինիս հրաժարումը օրուան խնդիր է։

—Հաշիւ եղած է թէ Աւստրիոյ ֆէսի գործարանները մէկ միլիոն ռակի տուտուր կ'ընեն Թուրքիոյ հետ։

—Դատարաններու մէջ Հայեր, Յոյներ ու Սերպեր զինուորական իշխանութեանց կը դիմեն՝ իրրեւ կամաւոր զինուոր օսմ. բանակը ընդունուելու համար։

—Փողոցներու մէջ ծանուցումներ փակցուած են, հրաւիրելով Ժողովուրդը չգնել Աւստրիայէն եկած դաւադանները։

—Ամերիկեան Տրիպոլոս կուսակալ ու հրամանատար կարգուեցաւ Միւլիր Ապասուլլան փաշա, որ Մէյտնէի զրկուած էր տեղւոյն երկաթուղին բացումը կատարելու։

—Զեռնհաս պաշտօնարանը նկատելով որ մզկիթ դացող իսլամ կիներու հագուստները կը կորուին կարգ մը անձերու կողմէ, ծանոյց ոստիկանութեան արգիլել այդ արարքը և հեղինակները երեւան հանել։

—Տէրութեան պաշտօնաթերթը՝ Թազվիմի Վաղայլի կը ծանուցանէ թէ Տարգական Օրէնքին 35րդ յօդուածին տրամադրութեանց համաձայն, լրագիրներու յաւելուածները պէտք է յատկացուին պաշտօնական զեկուցումներու և պաշտօնական կարեւոր հեռագիրներու. անասաղ լրագիրները մէկէն մինչեւ երեք ամիս դադարման պիտի դատապարտուին և հրատարակուած յաւելուածներն ալ պիտի հատաքուին։ Այդ միտքով պէտք եղածը գրուած է ոստիկանութեան նախարարութեան։ Եհեի Կազէտա կ'ըսէ թէ Տարգական Տեսչութիւնը կ'ուզէ իր ամէն գործերը կարելի եղածին չափ օրէնքին տրամադրութեանց համաձայնեցնել։ Կը հարցնէ թէ վերջերս լրագիր մը դադարման դատապարտուեցաւ. այդ իրաւասութիւնը օրէնքին ո՞ր տրամադրութեան համաձայն է։

—Կ. Պոլսոյ մամուռնաճիները միացած են աւտրիական չոգենաւներէն ո՛չ ապրանք առնել, ո՛չ ապրանք առնել և ոչ ալ ածուխ փոխադրել։

—Սամսունի ծխախոտի գործաւորները, որոնք գործադուլ ըրած են և սեղոյն անկորոյթիւնը խանգարելիք ցոյցեր կ'ընեն, մէկ քանի կարճամիտներու հետ յարձակեր են Ռէժիի անօրէնին տունը վրայ։ Հրաման տրուեր է այդ անօրէնը անկէ հեռացնել, վասն զի խնդիրը կը տարածուի։

—Կիրակի իրիկուն Բերայի Մինարէ փողոցին մէջ ռմբիր մը գործուեցաւ։ Երկու Հայեր, մէկը՝ Պէյլիթաշի մէջ խանութի և միւսը՝ նախկին խաֆիյէ մը, կռուի բռնուեցան։ Առաջինը Բերա գա-

ցած էր՝ վախցուած ծխախոտ վաճառող։ Վերջինը բէվոլվէրով սպանեց իր հակառակորդը և փախաւ, բայց Խնդրոն Ֆրանսէզէն քիչ մը վար ոստիկանները դայն ձերբակալեցին։ Վրայէն գտնուեցան երկու բէվոլվէր և դաշոյն։ Ձերբակալուածը ոստիկանատուն տարուեցաւ։

